



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հրադարարի ռեժիմի
խախտման դեպքերի և հայ-ադրբեջանական ու դարաբաղաադրբեջանական շփման
գծում սահմանային վիճակի վերաբերյալ

ՎԱՆԱԶՈՐ

2022

Հեղինակներ՝ Արմինե Մաղիկյան
Նազելի Մովսեսյան
Խմբագիր՝ Արթուր Մաքունց

Մույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Մույն տեղեկանքի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Իրավիճակի նկարագրություն

2022 թ. հունվարի 8-ից ադրբեջանական զինված ուժերը հրադադարի ռեժիմը սկսեցին խախտել հայ-ադրբեջանական սահմանի արևելյան ուղղությամբ¹: Երկու օր անց՝ հունվարի 10-ին, վերջիններս սկսեցին կրակել նաև ԱՀ/ԼՂ Կարմիր Շուկայի ուղղությամբ²: Հունվարի 11-ից հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը կրկին սրվեց, երբ ադրբեջանական զինված ուժերը վերսկսեցին կրակահերթը հայ-ադրբեջանական սահմանի արևելյան ուղղությամբ՝ օգտագործելով հրետանային միջոցներ և նույնիսկ անօդաչու թռչող սարքեր³:

2022 թ. փետրվար ամսվա ընթացքում Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը պարբերաբար հայտնում էր, որ իբր հայկական կողմը խախտել է հրադադարի ռեժիմը՝ շփման գծի տարբեր ուղղություններով: Նշված տեղեկությունները, սակայն, հերքվում էին ՀՀ ՊՆ և ԱՀ/ԼՂ ՊԲ կողմից⁴:

2022 թ. մարտի սկզբին շարունակելով հրապարակել տեղեկություն հայկական զինված ուժերի կողմից հրադադարի ռեժիմի խախտման մասին՝ ադրբեջանական զինված ուժերն անցան հրադադարի ռեժիմի առավել ծավալուն խախտման դարաբաղաադրբեջանական սահմանին, ընդհուպ մինչև ադրբեջանական զինված ուժերի ներթափանցումը Արցախի վերահսկողության տակ գտնվող գյուղեր ու բարձունքներ⁵:

Ըստ Արցախի պաշտպանության նախարարության՝ մարտի 24-ին Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները ներխուժեցին Արցախի Հանրապետությունում ՌԴ խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտի՝ վերահսկողության տակ վերցնելով Ասկերանի շրջանի Փառուխ գյուղն ու հարակից դիրքերը և փորձելով

¹ <https://mil.am/hy/news/10257>

² <https://factor.am/461633.html>

³ <https://mil.am/hy/news/10263>

⁴ <http://nkrmil.am/news/view/3310> , <https://mil.am/hy/news/10338>, <https://mil.am/hy/news/10344>, <https://mil.am/hy/news/10355>, <http://nkrmil.am/news/view/3312>, <https://mil.am/hy/news/10369> , <http://nkrmil.am/news/view/3314>, <https://mil.am/hy/news/10378>, <http://nkrmil.am/news/view/3315>, <https://mil.am/hy/news/10381>

⁵ <https://factor.am/484764.html>

առաջխաղացում ապահովել Արցախի Հանրապետության արևելյան սահմանագոտում⁶:

Նշենք, որ մինչ այժմ՝ 2022 թ. հունիսի դրությամբ, Ադրբեջանի զինված ուժերը շարունակում են մնալ այդ տարածքում: Ի դեպ, ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովը 2022 թ. հունիսի 5-ին Հայաստանի արտգործնախարար Ա. Միրզոյանի հետ հանդիպման ժամանակ նշեց, որ «սահմանագատման առարկայական աշխատանքներ սկսելու շրջանակում Փառուխի հարցերն անպայման կքննարկվեն և լուծում կստանան»⁷:

2022 թ. մարտին հրադադարի ռեժիմը խախտվել է Խրամորթի, ինչպես նաև Նախիջևանի, Մարտունու շրջանի Խնուշինակ և Կարմիր Շուկա համայնքների վարչական տարածքների ուղղությամբ:

ԱՀ ՊՆ-ի տվյալներով՝ մարտի 9-ից 10-ն ընկած ժամանակահատվածում ԱՀ Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղի հարակից տարածքի ուղղությամբ արձակվել է 60 մմ տրամաչափի ականանետի 2 հատ ական, իսկ արևելյան ուղղությամբ՝ Խրամորթ գյուղի հարակից տարածքի վրա արձակվել է 60 մմ տրամաչափի 23 հատ ական⁸: Բացի այդ, ադրբեջանական ստորաբաժանումները մարտի 25-ի գիշերը կրակել են ՊԲ ստորաբաժանումների վրա՝ կրկին կիրառելով հարվածային ԱԹՍ-ներ⁹:

Մարտին Խրամորթ համայնքի հարևանությամբ տեղակայված ադրբեջանական մարտական հենակետից բարձրախոսով պարբերաբեր հայերեն լեզվով հնչեցվել է տարածքը լքելու հորդորով ձայնագրություն՝ ուղղված համայնքի բնակիչներին¹⁰:

Նշենք, որ մինչ հրադադարի ռեժիմի խախտման ծավալների մեծացումը 2022 թ. մարտի 7-ի գիշերը Հայաստանի Հանրապետությունից Արցախ մտնող զազատար խողովակաշարի վնասման հետևանքով Արցախի Հանրապետությունում դադարեցվել

⁶ <https://factor.am/491621.html>

⁷ <https://armeniasputnik.am/20220609/parukhi-harcy-klutsvi-sahmanazatman-ararkajakan-ashkhatangner-skselu-shrijanakum-lavrrov-43105020.html>

⁸ <https://factor.am/485273.html>

⁹ <https://factor.am/491621.html>

¹⁰ <https://www.azatutyun.am/a/31744823.html> , <https://www.azatutyun.am/a/31747686.html>

էր գազամատակարարումը: Գազատարի վնասված հատվածը աղբբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող գոտում էր¹¹: «Արցախագագ» ՓԲԸ մասնագետների կողմից վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար Արցախում տեղակայված ՌԴ խաղաղապահ զորակազմի ներկայացուցիչների և Անվտանգության խորհրդի գրասենյակի աշխատակիցների մասնակցությամբ աղբբեջանական կողմի հետ տարվել են բանակցություններ, որոնց արդյունքում գազամատարարումը հասանելի է եղել միայն 12 օր անց՝ մարտի 19-ին¹²:

Ապրիլին հրադադարի ռեժիմը խախտվել է դարաբաղաաղբբեջանական սահմանանին, մասնավորապես՝ Փառուխ գյուղի հատվածում¹³:

Ապրիլի վերջին ևս Աղբբեջանի պետական սահմանապահ ծառայության կողմից տարածվեց հաղորդագրություն այն մասին, թե իբր ապրիլի 23-ի երեկոյան ՀՀ ԶՈւ ստորաբաժանումները դիվերսիոն գործողությունների են դիմել՝ փորձելով մուտք գործել հայ-աղբբեջանական սահմանի հարավ-արևելյան ուղղությամբ Աղբբեջանի ԶՈւ վերահսկողության տակ գտնվող տարածք: Տեղեկությունը հերքվել է ՀՀ ՊՆ կողմից¹⁴:

Ապրիլի 30-ին Աղբբեջանի պաշտպանության նախարարությունը տարածեց հաղորդագրություն այն մասին, թե ապրիլի 30-ի երեկոյան ՀՀ ԶՈւ ստորաբաժանումները խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից գնդակոծել են հայ-աղբբեջանական սահմանի արևելյան ուղղությամբ տեղակայված աղբբեջանական մարտական դիրքերը: Տեղեկությունը ՀՀ ՊՆ կողմից որակվեց որպես ապատեղեկատվություն¹⁵:

Աղբբեջանի նմանատիպ հաղորդագրություններին, որպես կանոն, հաջորդում են Աղբբեջանի ԶՈւ կողմից հրադադարի ռեժիմի խախտումների դեպքերը:

Այսպես, ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության համաձայն՝ մայիսին 7-ին Աղբբեջանը տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ բացելով՝

¹¹ <https://factor.am/485279.html>

¹² <https://www.armtimes.com/hy/article/233259>

¹³ <https://www.aravot.am/2022/04/12/1259741/>

¹⁴ <https://mil.am/hy/news/10559>

¹⁵ <https://mil.am/hy/news/10584>

հրադադարի ռեժիմը խախտել է հայ-ադրբեջանական սահմանի արևելյան ուղղությամբ տեղակայված ՀՀ ՋՈՒ մարտական դիրքերի, ինչպես նաև Սոթքի ոսկու հանքավայրի ուղղությամբ, ինչի հետևանքով հրազենային վիրավորում է ստացել հանքավայրի աշխատակիցներից մեկը¹⁶:

Ընդհանուր առմամբ, ողջ մայիս ամսվա ընթացքում ադրբեջանական կողմը պարբերաբար տեղեկություններ է տարածել հայկական կողմից հրադադարի ռեժիմի խախտումների վերաբերյալ, որոնք հերքվել են ՀՀ ՊՆ կողմից¹⁷:

2022 թ. մայիսի 24-ին Հայաստանի և Ադրբեջանի միջպետական սահմանին տեղի ունեցավ երկու երկրների փոխվարչապետերի՝ Միեր Գրիգորյանի և Շահին Մուստաֆանի առաջին հանդիպումը՝ սահմանագատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովների համատեղ աշխատանքի ձևաչափով:

Հանդիպման ընթացքում փոխվարչապետերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը՝ աշխատանքներ տանելու սահմանագատման և այլ համապատասխան հարցերի հարցերի շուրջ:¹⁸

Չնայած դրան, սահմանային վիճակը կրկին լարվել է հանդիպման հենց հաջորդ օրը. մայիսի 28-ին ադրբեջանական ՋՈւ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից, այդ թվում՝ դիպուկահար հրացաններից, կրակել են հայ-ադրբեջանական սահմանի հարավ-արևելյան հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով հրազենային վիրավորում է ստացել պարտադիր ժամկետային զինծառայող, ով հաջորդ օրը մահացել է բժշկական կենտրոնում¹⁹:

Հունիսի 3-ին ևս Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տարածեց հաղորդագրություն այն մասին, որ իբր հունիսի 2-ի երեկոյան և գիշերը ՀՀ ՋՈՒ ստորաբաժանումները խախտել են հրադադարի ռեժիմը: Տեղեկությունը, ինչպես և նախկինում, ՀՀ ՊՆ կողմից որակվեց որպես ապատեղեկատվություն: Նմանատիպ

¹⁶ <https://mil.am/hy/news/10609>

¹⁷ <https://mil.am/hy/news/10614> , <https://mil.am/hy/news/10626> , <https://mil.am/hy/news/10634> , <https://mil.am/hy/news/10644> , <https://mil.am/hy/news/10651> , <https://mil.am/hy/news/10662> , <https://mil.am/hy/news/10663> ,

¹⁸ <https://www.azatutyun.am/a/31865710.html>

¹⁹ <https://mil.am/hy/news/10688> , <https://mil.am/hy/news/10689>

տեղեկություններ տարածվեցին նաև հունիսի 16-ին և 20-ին: Ի դեպ, հունիսի 19-ին Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհվեց ՀՀ ՁՈՒ պարտադիր ժամկետային զինծառայող:

Ընդհանուր առմամբ, 2022 թ առաջին կսիամյակում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացել է 9 զինծառայող՝ հունվարին՝ 3, մարտին՝ 4, մայիս և հունիս ամիսներին՝ 1-ական զինծառայողներ: Նրանցից 5 պարտադիր ժամկետային զինծառայողներն են, 3-ը՝ պայմանագրային, 1-ը՝ սպա:

Կարող ենք արձանագրել, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո հրադադարի ռեժիմը շարունակում է պարբերաբեր խախտվել: Ավելին, ի տարբերություն մինչև 2020 թ. պատերազմական գործողություններն ընկած ժամանակահատվածի, երբ հրադադարի ռեժիմը խախտվում էր առավելապես դարաբաղասաղրբեջանական սահմանին, այժմ հրադադարի ռեժիմի խախտումներն առավել հաճախակի են դարձել հատկապես հայ-ադրբեջանական սահմանին:

Եռակողմ հայտարարության ստորագրումից հետո հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացել է ՀՀ և ԱՀ/ԼՂ 37 զինծառայող: